


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԱԽԲԵՐԸ ՀՈԳԱՆ**

Ամերիկեան եկեղեցիներու մէջ իրենց ծախքերը հազարու համար հեռեւեալ օկզբունքներու համեմատ կը չարժին: 1) Հառարակութեան ամէն մէկ անհաւար, իր կարողութեան սահմանին մէջ՝ պէտք է իր բաժինը բերէ եկեղեցիին ընթացիկ բոլոր ծախքերուն, այն եկեղեցիին որուն առանձնաշնորհումները և բարիքները ինք կը վայելէ: 2) Իւրաքանչիւր եկեղեցի պէտք է կառավարութիւն մարդու յատուկ մէթոսներով, այսինքն՝ զրամական խոստումագրութիւններ պէտք է կանոնաւորապէս հաւաքուին, զրամները ժամանակին հաշուցուին, հաշիւները ճշգրիտ կերպով պահուին: 3) Գործի մարդերը, հովիւը իր թուակին զրամը հաւաքելու աշխատանքին պէտք է ազատեն, որպէսզի ան իր ժամանակը արամարդէ աւելի կարեւոր և հրժուական և հազեւոր զործերու:

Շատ մը եկեղեցիները ուժովցած են վերի օկզբունքները որդեգրելով: Յաջողութիւնը եկեղեցիին մեծութենէն կախեալ չէ ոչ ալ անոր անդամներուն տալու կարողութենէն, այլ եկեղեցիին ամէն մէկ անդամին անար պահպանումին համար արձանագրուելն: Մարդ մը որ որեւէ ձեռնարկի մը համար զրամ կուտայ, կ'ենթադրուի թէ ասով ալ կը հետաքրքրուի:

Խնդիրը ամէն մէկ անհատին, հարուստին և աղքատին միջև և պղտիկէն կանոնաւոր վճառումներու համար խոստում մը ապահովել է, և ապա աշխատել որ այս խոստումները տակնին վճառուին:

Ինչպէս պէտք է այս օկզբունքներուն համեմատ չարժիլ: Տարուան վերջնապուն մօտ հովիւին առաջնորդութեանը տակ եկեղեցիին անդամներէն մարմին մը կ'ընտրուի: Մի քանի շարաթիւրու ընթացքին այս մարմինը իր ծրագիրը կը դնէ: Յառաջիկայ տարուան ելեմուտքը (պիւտճէ) կը պատրաստէ, եկեղեցիին անդամներուն պէտքերը և տալու կարողութիւնը նկատի առնելով: Շատ մը եկեղեցիներ թարեգործական աւատարանչական նպատակներու համար պէտք եղած զուժարներն ալ այս կերպով կը հանդանակեն:

Եկեղեցիին վարչական զործերուն մասնակցիլ ազօթածողովի մը մէջ ներկայ գտնուելու չափ կրօնական զործ մ'է, հեռեւորոր այս մարմինը պէտք է իր նիստերը բանայ միացեալ ազօթքով երկնային առաջնորդութիւնը վայելելու համար:

Բոլոր պատրաստութիւններէն վերջ 'Իեկատեմբերի առաջին կիրակին կ'որոշուի այս ծրագիրը զործադրելու համար: Հովիւը անկէ մէկ շարաթ առաջ բռնէն կը ծանուցանէ թէ յառաջիկայ կիրակի կէսօրէ վերջը ժողովուրդին տուն մնալ կը խնդրուի, որպէսզի մասնախումբին անդամներուն այցելութեանը

պատրաստ ըլլան: Այս անդամները՝ հին առաքելաբանութեան նման զոյգ զոյգ, յարմարութեան համեմատ փորձառու մը ընկերացած ըսկանակի կ'այցելէն իրենց բաժնին տուհերը:

Շատ անգամ մասնախումբին անդամները իրենց այցելութիւնները կատարելէ վերջ՝ եկեղեցի կը վերադառնան, իրենց ջանքերուն արդիւնքը տեղեկագրելու, ուրախանալու ըման յաջողութիւններու համար, կամ մասնակի յաջողութեան պարագային նոր ծրագիրներ մշակելու:

Պատճառ մը չկայ տարակուսելու թէ՛ եթէ այս կերպը լման իրազօրծուի մեր եկեղեցական գործերուն մէջ նոր կեանք և աւելն պիտի մտնէ:

Ը. ՓԱՐԹՐԻԺ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՕՐՈՒԱՆ ՊԱՏԿԱՄԸ

1. ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԱՌԹԻԻ

Տարուան առաջին ամիսը իր անունը առած է Հռովմէական Յանոս (JANUS) աստուծոյ, որ ըստ սմանց զուգ նշանակող (JANUA) բառէն յառաջ եկած է: Յանոս բոլոր սկզբնաւորութիւններու, ծագումներու, մուտքերու, դուռերու, ձեռնարկներու պաշտպան աստուածն էր. անոր արձանը ընդհանրապէս կը ներկայացուէր երկու զլուխներով, որոնք հակառակ ուղղութեամբ իրարու միացած էին:

Այս երկզիմի արձանը կը թելադրէ մեզի խորհիլ թէ ան կը խորհրդանշէ ժամանակին միութիւնը. անոր զէմքերէն մին կը նայի դէպի անցեալը, փոք միւսը զէպի ապագան. բայց երկուքն ալ իրարմէ անբաժան են: Ապագան անցեալին շարունակութիւնն է. ապագան կը կերտուի անցեալին պատրաստած ատաղձովը: 1927 ա'լ անցեալի կը պատկանի, և 1928 կը բանայ մեր առջեւ իր գանձարանին դուռը: Չենք գիտեր թէ ան ինչէ՛ր վերապահած է մեզի համար, բայց գիտենք թէ մեր անցեալը ուրոջ չափով մը յարաբերութիւն ունի այն առիթներուն հետ, որոնք մեզի պիտի ներկայանան, այն բարեքներուն հետ, զորոնք պիտի վայելինք, այն դժբաղդութիւններուն հետ որոնց պիտի հանդիպինք, այն յուսախաբութիւններուն և ծախողանքին հետ, զորոնք պիտի կրենք յառաջիկայ տարուան միջոցին: Կա-

րելի՛ք 1928ին մէջ շատ մը դուռեր մեր առջեւ փակ պիտի գտնենք, անոր համար որ անոնց բանալիները 1927ին մէջ արդէն կորոնցուցած ենք: Անցեալ տարին յառաջիկայ տարուան ընթացքին որոջ չափով մը ուղղութիւն կուտայ: Անցեալը կտրուած է, բայց ապագան կերտել մեր ձեռքն է: Մենք 1928 կրնանք ա'յնպէս ապրիլ որ 1929ը մեզի ներկայանայ աւելի՛ բարեպատեհ առիթներով, աւելի՛ բարեբար խոստումներով:

Յաւանականութիւնն ալ մեր ներկայ կեանքին շարունակութիւնը չէ՞ միթէ:

ՆՈՐԱՅԻՆ ՄԸ ՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՓՐԿԵՑ 2.

Հոովմէական կայսրութեան անձանթ մնացած մէկ վայրը, զիւզական ոխոտի մը մըսուրին մէջ, շատ համեստ պայմաններու տակ աշխարհ եկաւ պզտիկ մը, որուն վիճակը Լը տիեզերական պատմութեան նոր ուղղութիւն մը տալ: Յիսուսի միտնողի թուականը մեծ դարադրութիւն մը կը բանայ մարդկային յառաջգիւնութեան արձանագրութիւններուն մէջ:

Երբ Յիսուս ծնաւ քաղաքակիրթ աշխարհը յուսահատական նոպայէ մը կ'անցնէր. ինքնապաշտութիւնը, իրր զովիլի նորոյթ մը, սովորական դարձած էր կրթեալ դասակարգին մէջ: Մարդը՝ կարծես թէ վերելքի ճիգերէն ուժառայու՝ մութ անորոշութեան մէջ կ'երկարար: Աստուած յայանութեան յարմարագոյն ատենն էր: «Երբ ժամանակը լիցուեցաւ, Աստուած զրկեց իր որդին», (Փաղ. 4. 4): Եւ Փրկիչը եկաւ, որուն աւետիսը հրեշտակները խմբերդեցին:

«Փառք ի Բարձունս Աստուծոյ

յերկիր խաղաղութիւն

ի մարդիկ հաճութիւն»:

Այսօր աշխարհը տաքնապալից նոպա մը կ'ապրի: Մեծ միտքերէն և աշխարհափարնէրէն ոմանք ապագան մութ կը տեսնեն, ներկայ քաղաքակիրթ անհատը իր յառաջգիւնական քայլերուն մէջ անհաստատութիւն կը չուցնէ և կը խաբխափի: Այս վիճակը Քրիստոնեայ եկեղեցիին համար կը ստեղծէ յարմարագոյն առիթ մը՝ տալու իր պատգամը: Պէտք է ան այժմ աւելի ուժգին հնչեցնէ խաղաղութեան աւետիսը՝ տառապող մարդկութեան: Աշխարհը ակնդէտ կը սպասէ նոր լոյսի մը,

աշխարհ ծարաւի է նոր կենարար շիճակի մը։
Եկեղեցիին գերազոյն պարտքն է՝ այս նորա-
ծին Յիսուսը ընծայել իրը Ծնունդի նուէր
կարօտ մարդկութեան։

ԱԶԱՏ

ՀՆԱՆՈՒԶԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատմութիւնը դեռ լման չենք գիտեր։
Նոր պեղումներ միշտ նոր լոյս կը սփռեն անց-
եալին վրայ, և կը ստիպեն պատմագիրները
որ իրենց հեղինակութիւնները սրբապրեն և
զանոնք նորէն զրկեն։ Մարդուն անցեալը դեռ
մեծ մասամբ հողին տակը թաղուած է։

Ամերիկայի մէջ անհետացած ժողովուրդներ-
րու և մշակոյթներու ֆոսթորները գտնուե-
ցան, որոնք պատմագիրներու համար առատ
նիւթ կը հայթայթեն լուծելու այդ երկրի
անցեալին գաղտնիքները։ Թութ-անխամ-
նի գերեզմանի գիւտին յիշատակը դեռ միտ-
քերուն մէջ թարմ է։ Վերջացող տարւոյն
մէջ Ռուս գիտնական մը չինական անապա-
տի մէջ գտաւ Ճէնկիդ-Սանի գերեզմանը։

Վերջերս երկու կարեւոր հնախուզական
փորձեր կատարուեցան Իրազի և հիւս։ Արա-
բիոյ անապատին մէջ։ Քաղաքներու Ուր
քաղաքին մէջ, Աբրահամի հայրենիքը, իշ-
խանի մը (թերեւ թագաւորի մը) գերեզմանը
գտնուեցաւ, որուն պարունակութիւնը խու-
զարկունքներու բոլոր ակնկալութիւնները գե-
րազանցեցին։ Այս գերեզմանը 5500 տարւոյն
հնութիւն մը ունի, և կը պատկանի Մէս-Կա-
լամ-Տուկի (երկրին բարի հերոսը) որ զրուած
է գտնուած առարկաներու վրայ։

Գտնուած առարկաներն են սակիէ դա-
շոյններ և տէգեր, սակիէ օղիք, մատանի-
ներ և զնգասեղներ, պղինձէ գնդասեղ մը,
որուն զլուխը սակիէ կապիկ մըն է, արծաթ-
եայ շանիկ մը, երկու սակիէ խոշոր գաւաթ-
ներ և արծաթապատ տաւիկ մը։ Բայց ա-
մենէն աւելի սքանչալի մի քանակայ եղաւ
բոլոր զլուխը ծածկող սակիէ զիմակ մը սակիէ
կեղծ մազերով։ Այս առարկաներուն մէջ
տեսնուող նորր արուեստը կը ցուցնէ թէ
Սուսերի երկրին մէջ սակերէութիւնը ս'ըջափ
զարգացեալ վիճակի մէջ էր 5500 տարիներ
առաջ։

Անգլիացի մարգարան Լ. Տ. Պլեքսթրն,
Պապետինի և Իրազի մէջ տարածուող ա-
նապատին ճիշտ մէջտեղը, հին քարի գարուն

յատուկ շատ մը գործիքներ գտաւ, որոնց ու-
սումնասիրութիւնը գինքը մղեցին խորհելու
թէ, այդ առարկաները 20,000 տարիներ ա-
ռաջ ապրող ժողովուրդի մը կը պատկանին։
Այս գիտունին կարծիքին համեմատ այս ժո-
ղովուրդին շառաւիղները այսօր կը գտնուին
եփրատի եզերքին վրայ, հին Քիչ քաղաքին
տեղը։ Այս կը ցուցնէ թէ Սուսերեան մեծ
քաղաքակրթութեան ծագումէն զարեւր առաջ
այս անապատին մէջ կ'ապրէր ժողովուրդ մը
շաթ հաւանականաբար ներկայէս տարրեր
կլիմայական պայմաններու տակ։

ԴԱՍՏԻԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՄԱՆԿԱՆՑ

ՆԿԱՐԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԵՋ

Մանուկը աշխարհ կուգայ ժառանգական
գեղեցիկ յատկութիւններով օժտուած, և կը
վերապրի իր նախահայրերուն, իր ցեղին նա-
խապրած կեանքը։ Բայց միջավայրի ազդե-
ցութեան տակ, անոր բնածին կարողութիւն-
ներն և ընդունակութիւնները կը բարեփոխ-
ուին ու կը զարգանան, և կամ կը վատթարա-
նան։

Մանկան մտային թաղուն յատկութեանց
մասին գաղափար մը տալու համար՝ հարկ կը
տեսնենք հոս մէջ բերել մի քանի տեսու-
թիւններ, որոնք պիտի նպաստեն աւելի լաւ
հասկնալու նորածին վիճակը։

Տառնութեան գարու հոգեբանութիւ-
նը ընդգրկեց այն տեսութիւնը թէ՛ մանկան
միտքը կը նմանի ճերմակ, անրիժ կտոր մը
թուղթի, սրուն վրայ կը զրոյնուին միջա-
վայրի զանազան ապաւորութիւնները, իր մօ-
րը անմեղ ժպիտէն սկսելով մինչև բնութեան
հրաշալիքները, որոնք հեռքեր կը թողուն
մանկան յիշողութեանը մէջ, 1-6 տարեշրջա-
նին։

Ընդհակառակն տառնիւններով դա-
րու հոգեբանութիւնը ընդգրկեց սա՛ տեսակէ-
տը թէ՛ մանկան միտքը արատաւորուած է
ի ծնէ՛ իր ծնողքին և նոյն իսկ իր նախահայ-
րերուն մեղացի և անբարոյականութեանց պատ-
ճառաւ։

Ուրիշ երբեք գաղափար մը ունէր, թէ
մանկան ուղեղը իր առաջին տարիին մէջ ա՛յդ-
քան առաձգական (PLASTIC) վիճակի մը մէջ կը
գտնուի, որ արտաքին ապաւորութիւնները
կարող են անոր մտքէն բոլորովին անհետաց-

նեղու և սրբելու ժառանգական հետքերու արատները: Այս երեք տէսակէտները կը տանին մեզ սա երկու ենթադրութեանց թէ՛ (ա) մանկան ժառանգական բնգունակութիւնները գլխաւոր ազդակներն են կազմելու ապագայի մարզը, (անոր անձնականութեանը ու նկարագրի) , որուն մէջ գաստիարակութիւնն ու միջավայրը շատ քիչ բաժին ունին: Իսկ երկրորդ ենթադրութիւնը սա է թէ՛ միջավայրը (բնաանկան յարկը, դպրոցն ու և կեղեցին, ընկերութիւնն ու բնութիւնը) կը բնան բոլորովին յեղաշրջել, մանկանց ընդոծին կաւոզութիւնները, որոնց ազդեցութեան տակ մանուկը կ'ըլլայ տարբեր մէկը՝ իր սերունդէն ու ծնողքէն:

Աւելի իրականութեան կը մօտենան երբ կ'ըսենք թէ մարդ անհատը (իր կեանքի բոլոր տարեքաններուն մէջ) առաջընթացումն է, իր ժառանգական ընդունակութեանց և իր միջավայրի:

Արդ, գաստիարակութիւնը ի՞նչ գեր կըրնայ կատարել մանկան նկարագրի կազմելու մէջ:

Այս հարցը վերլուծելու համար, պէտք է հասկնալ, նախ՝ գաստիարակութիւն բառին նշանակութիւնը. երկրորդ՝ անոր նպատակը արդի հոգեբանութեան տէսակէտէն. իսկ երրորդ թէ ի՞նչ կը նշանակէ գաստիարակել:

Դաստիարակութիւնը գիտութիւն մըն է, որ ունի իր տիեզերական ու անյկզի օրէնքները, նկատի ունենալով միջավայրի ու ժամանակի պահանջումները: Իսկ գաստիարակել գիտնալը արուեստ մըն է, որուն տիրաւորու համար իւրաքանչիւր գաստիարակ ուսուցիչ պէտք է գիտնայ, սա երեք գիտութիւնները. — հոգեբանութիւն, մանկավարժութիւն ու բարոյագիտութիւն:

Դաստիարակութիւն բառին Անգլիերէնը կամ Ֆրանսերէնը (EDUCATION) կ'ուզայ լատինական բառէ մը, EX-DUCO որ կը նշանակէ դուրս բերել. և գաստիարակը կրնայ դուրս բերել միայն ինչ որ կայ մանկան մօքին մէջ: Դաստիարակութեան նպատակը ոչ թէ դրսէն նոր կարողութիւններ ներմուծել է մանուկին մէջ, այլ երեան բերել անոր արդէն ունեցած գանազան կարողութիւնները, գիտակից ընկ զայն իր ընածին ընդունակութեանց, եւ կարողացնել մարդ անհատը գործածել գիտնալու, իր

թաղուն ոյժերը կեանքի զոյապայքարին մէջ:

Արդի հոգեբանութիւնը, նկատի կ'առնէ մանուկը և անոր մտային գործունէութիւնը, և ոչ թէ անոր ուսուցանելիք նիւթն ու գիտութիւնները: Դաստիարակութեան նպատակն է ուսումնասիրել մանուկը և անոր իմացական, զգացական և բարոյական ձիրքերն ու յատկութիւնները, և անոնց յարմարցնել ուսուցանելիք նիւթը: Ուստի, գաստիարակութեան մէջ առաջին կէտը՝ գոր պէտք է նրկատի առնել, մանուկներու ուսումնասիրութիւնն է, որուն ջատագովներէն մին՝ Բուսո (1712. 1778) բաժն էր. «Մանուկները ուսումնասիրել արուեստ մըն է, որ մեծ արժէք ունի գաստիարակութեան գործին մէջ»: Անոր ժամանակակից և յարգուած գէմքերէն մին՝ Փեթալօօփ՝ ընդգրկեց սա սկզբունքը թէ գաստիարակութեան կանոններն ու մեթոտները յարմարցունելու են մանկանց կարողութեանց: Ֆրոպէլ, մանկավարժութեան օտարաբան ու մանկապարտէզի հիմնադիրը, յայտարարեց թէ կեանքի ամէն մէկ շրջանը (մանկութիւն՝ 6-12, պատանեկութիւն՝ 12-18, ու երիտաւարդութիւնը՝ 18-25) ունի իրեն որոշ յատկանշական պահանջները, որոնց գոհացումով կարելի պիտի ըլլայ կ'ըրտել մարդուն անձնականութիւնը:

Կեանքի այս գանազան տարեշրջաններուն մէջ, մանկութիւնն է նկարագրի կազմելու ամենէն յարմարագոյն ժամանակը որուն շուրջ պիտի գտնան մեր խորհրդածութիւնները:

Ինչո՞ւ ուսումնասիրել պիտի է մանուկները: Որովհետեւ ուսուցիչը գանտք լաւ ճանչնալով կարող պիտի լլլայ գաստիարակութեան ու գիտութեան կանոնները յարմարցնել անոնց մտաւոր պարզացումին: Ուսուցիչը չէ որ կանոններու մեթոտներ կը ստեղծէ, այլ մանուկն է որ կանոններ ու օրէնքներ կուտայ իր ուսուցիչին, գաստիարակութեան մարգագայրին մէջ:

Յաջորդին պիտի ջանանք մանկան առաջին և երկրորդ տաքիշրջաններու մէջ ունեցած իր իմացական, զգացական ու կամեցողական յատկութիւնները, որոնք գլխաւոր ազդակներն են անոր նկարագրի կազմելու մէջ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ընթերցողներուն ծանօթ է թէ, Պորտի և Ամերիկայի Հայ Աւետ. եկեղեցիի միջեւ գոյացած համաձայնութեան համեմատ՝ ոչինքնապաշտ քուրդ Հայ Աւետ. եկեղեցիները հոգալու գործը պիտի կատարուի ինքնադամներէ, քաղկացած միացեալ Մարմինէ մը: Սուրիոյ պաշտին համար բնարուած Գործադիր Մասնախումբին Առեւտրական է Վեր. Հ. Րիքի և առեւտրապիրը՝ Վեր. Կ. Յարութիւնեան: Այս մասնախումբը վերջերս 4 նիստերէ բաղկացեալ երկօրեայ ժողովին մէջ, նկատի առաւ մէկ ու կէս տարւան, 1 Յունուար, 1928 էն մինչև Յուլիս 1929ի ելեւմուտքը: — Հալէպ Ապիզիէ Հայ Աւետ. եկեղեցիին Ե. Ք. Ջանից Միութեան գասախօսական հաւաքովներուն մէջ յաջորդաբար խօսեցան Դեկ. 14ին Վեր. Կ. Յարութիւնեան «Ինչու Բողոքական ենք» նիւթին վրայ, Դեկ. 21ին Տօքթ. Ա. Ապու-Հայաթեան թոքատապի և աղետապի վրայ, Իսկ Դեկ. 28ին Տօքթ. Բ. Ալթունեան Ք. Ճառագայթներու վրայ: Ժողովուրդը մեծապէս օգտուեցաւ այս շինից և հետաքրքրական պատմութիւններէ:

Նոր Աւետարելի էական նպատակներէն մէկն է եկեղեցիները իրարու հետ հաղորդակից պահել անոնց ընթացիկ կեանքէն քաղուած լուրեր հրատարակելով: Սրի կը խնդրենք բոլորէն ընդհանրապէս և կրօնական պաշտօնականներէն մասնաւորապէս, որ իրենց պատկանած համայնքներուն և տարրեր յարանուանութիւններուն մասին ամփոփ տեղեկութիւններ զրկեն խմբադրութեան հասցէին:

Թերթս առ այժմ կը հրատարակուի ութը էջ հաշիւով և ութը տաճիկերէն, տարրեր բովանդակութեամբ:

Խմբագրութիւնն զիտակից է թէ այս յաւաքոյն կարգաթրութիւնը չէ, և կը փափաքի 16 էջ հաշիւով և 16 էջ տաճիկերէն երկութեամբ հրատարակել նոյն պարունակութեամբ, երբ պայմանները ներքին: Կը փափաքինք այս մասին հասկնալ մեր ընթերցողներուն տրամադրութիւնը և կը խնդրենք որ այն անհատները, որոնց հասցէին Նոր Աւետարելի կը գրուի, յայտնեն Հայերէն կամ Թուրքերէն Նոր Աւետարելի առնել փափաքողներուն թիւը և հասցէները:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՈՐԻ

ԿԻՐԱԿԻ. Մարտի 15-ի հաճութիւն. Եփես. 4:25-32:

Գիտե՞՞ս այս Քրիստոնէական օրհնութիւնը ունենալու զաղանիքը: Այս համարներու համեմատ, ստուծինէ զգուշանալ, ճշմարտութիւնը խօսելու ու շարունակելու ընել, բարկութենէ և անպաշտ կիրքերէ հեռու կենալ, ամեն տեսակ զոգութենէ և ապականեալ խօսակցութենէ ետ կենալ և Քրիստոնէական սէր մը չափել է:

Աղօթք. Ողորմած Տէր, օգնէ՛ ընծի որ խօսքով, գործով և աղօթքով ուրիշներուն երջանկութեան միջոց ըլլամ:

ԵՆԿՈՒՇԱԹԻ. Պարտեւոսիւն. Յովն. 15: 1-18:

Աստուած ամէն մարդու համար նպատակ մը ունի, որուն իրագործման համար անձկանօք կ'ըստասէ: Կ'արժէ որ մեր կեանքը, ժամանակը, երջանկութիւնը անոր համար զոհելու պատրաստ ըլլանք: Կեանքի արժէքը՝ պատու և միայն ու պատու տալու մէջ է:

Աղօթք. Երկնաւոր Հայր, իմաստութիւն տուր, որ ամէն օրուայ հասարակ պարտականութիւններուն արժէքը գիտնամ, պանոնք թագաւորութեան յաւիտենական սկզբունքներովը չափեմ, բոլոր գործերուն մէջ յաւիտենական փառքը տեսնամ: Յանուն Յիսուսի: Ամէն:

ԵՐԵՔՇԱԹԻ. Աստուծոյ հաճախ վկայութիւն. Յովն. 5: 30-37:

Ի՞նչ կը վկայէ Յիսուս Աստուծոյ համար: Ան կը վկայէ թէ, Աստուած հօր երկնաւոր հայր մըն է, որ ամենու շատ մօտ է, թէ ամէն մարդ Անոր հետ պէտք է զործէ, որ մարդիկ ուղղամիտ և սիրով ըլլան իրարու հանդէպ և իրարու բարիքին համար աշխատին:

Աղօթք. Ամենակալ Աստուած, Հայր յաւիտենական, մեզի մօտ եղիւ, որպէսզի մաքուր և սուր խորհուրդներով Քեզի հետ ճշմարտապէս հաղորդակցինք, և Քու խաղաղութիւնդ մեր մէջ բնակի: Տէրոջ Սիրոյն համար: Ամէն:

ՉՈՐԵՔՇԱԹԻ. Տեղեւ հաճութիւն. Ես. 40. 1-15:

Ի՞նչ բարիք կը բերէ Տէրոջ ներկայութիւնը: Քաջութիւն, զինք սիրողներուն թողութիւն: Անոր զաւորը նախաձիւ և բարկութեան աղաղակները ուրախութեան երգերու կը փոխուին: Երբ Խաղաղութեան Իշխանը գայ,

չարաչար աշխատութեան լուծը կ'իյնայ և զործը իւր արդար վարձատրութիւնը կ'ըստանայ:

Աղօթք. Տէ՛ր եղբայրասիրութեան հոգին զօրացուր մեր մէջը, միաբանութեան օրհնութիւնները վայելիլ տուր մեզի: Քու սիրովդ լեցուր մեր սրտերը, որպէս զի Յիսուս Քրիստոսի իբրեւ քու զաւակներդ ապրինք աշխարհի վրայ: Ամէն:

ՀԻՆԳՇԱԽԻԻ. Տեղոք բաւարարիւնը. Սաղ. 103. 13-22:

Բացազրութիւնը աւելորդ է այս խօսքերուն համար: Պէտք է անոնց վրայ խորհինք և ազօթենք:

Աղօթք. Ո՛վ Տէր, կ'ազօթենք մաքով և մարմնով տառապողներուն համար: Քթա՛ անոնց, օրհնէ՛ տղէտները աստուածային զիտութիւնովդ, սորվեցուր անոնց որ դու ինչ լուսոյ աղբիւրը: Քթա՛ ամէն սիրտը կոտորածներուն և բժշկէ՛ զանոնք: Քեզմէ՛ հեռացողները Քեզի զարժուր: Քու հովանաւորութեանդ կարօտ եղողներուն ոգորմէ՛: Ամէն:

ՈՒՐԲԱԹ. Հաշտութիւն Աստուծոյ Հետ: Հոով. 5.1.11:

Ի՞նչպէս: Ո՛չ կրկնումներով ո՛չ ալ պարսպ և անիմատ ազգակներով Աստուծոյ հետ կը հաղորդակցինք, այլ Սուրբ Հոգիով ազօթելով: Ո՛չ ալ մաքի պարսպ յափշտակութիւններով, այլ սիրոյ թեւերուն վրայ երկինք վերանալով:

Աղօթք. Ոգորմած Հայր, շնորհէ որ կարող ըլլանք քննելու մեր սրտին խորերը և մեղքին խորհուրդները, հասկնալու համար մեր զիրքը և վիճակը քու առջեւ: Ազատ պահէ մեզ այն ամէն բաներէ և նպատակներէ, որ Քու փառքիդ հակառակ են և Քու Սուրբ անունդ անպատուութիւն կը բերեն: Օգնէ Քեզի ծառայելու խորհրդով և զործով: Ամենասուրբ անուանդ համար: Ամէն:

ԾԱԲԱԹ. Յիսուսի աշակերտ ըլլալ և բերել: Յովհ. 1.35-42:

Առաջին աշակերտները Յիսուսի հետեւելու համար արհեստ, բարեկամներ, տուն տեղ թողնցին: Ասիկայ մեծ զոհողութիւն էր: Մեր անօրեայ զործերուն մէջ Յիսուսի հետեւիլ և անոր ծառայելու անիւ զմուտը է և զոհողութեան հոգիի կարօտ: Այսպէս կու-

գայ Երկնից Թագաւորութիւնը:

Աղօթք. Ո՛վ Աստուած, որ երկրին լոյսը ազգերը նոյն արիւնէ ստեղծեցիր, փութա՛ օգնել քու ծառաներուդ քարոզելու խօսքդ լոյսը մարդկութեան, որպէսզի ամբողջ աշխարհը Քեզ ճանչնայ, սիրէ, վայելէ և ծառայէ: Յիսուսի անունովդ: Ամէն:

ԿԻՐԱՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՍԿԻՉԲԸ. Մատթ. 1: 1-14:

Յունուար 8

Յատաշիկայ վեց ամիսներու դասերը կը գտնուին Մարկոսի Աւետարանին մէջ:

Մեր դասը կը վերաբերի Աստուծոյ մարդոց հետ ունեցած յարաբերութեան երեք քայլերուն. ա) Մարգարէներու, բ) Յովհաննէս Մկրտիչի և գ) Յիսուսի պատգամները: Տես Ղուկ. 16. 16:

Մարկոսի գիրքը պատմումը գէպքերէն 40 տարի վերջ զրուած է, երբ անոր հեղինակը թագաւոր Յիսուսի մասին Աւետարանի սկզբնաւորութեան վրայ կ'սկսէր պատմել: Ան սնվիճելի վկայութիւն ու յիշատակներ կուտայ Յիսուսի կեանքին մասին: Այստեղեկութիւններու աղբիւրը Պետրոս էր: Անոնք զրի առնուեցաւ Մարկոսի կողմէ, հաւանաբար Հռոմ, Իտալիոյ մէջ բնակողներու համար:

ա) Մարգարէներ: Տես՝ Մաղաքիա 3. 1, ևս. 40. 3: Ղուկ. 24. 27 և 44-47 համարները կը յղուեն թէ Յիսուս իր աշակերտներուն սորվեցուց զանեւ Հին Կտակարանի մէջ իր մասին եղած վարդապետութիւնները: Նախնի Քրիստոնեաներու համար, որոնք միայն Հին Կտակարանը ունէին, այս աշակերտութիւններ մեծ հետաքրքրութեան նիւթ մ'էին: Ոմանք կը կարծեն թէ անոնք այսպիսի համարներու նօթատետր մը կազմեցին, որմէ Մարկոս բնագործնակած է այն երկու մէջբերութիւնները որոնցմով ան իր գիրքը կ'սկսի:

բ) Յովնանեւ Մկրտիչ: Յովհաննէս Մկրտիչի նկարագրութիւնը շատ կարճ է: Ուշագրութիւնը յաճախ կը կեղծանանայ անոր հոգու ստին և կերակուրին վրայ: Ասիկա կարեւոր էր անոր բաժնը — ապաշխարեցէք, քաւութեան հաւելէ եղէք, աւելի մէծ մէկը կուգայ, Անիկայ ձեզ պիտի մկրտէ ոչ թէ ջուրով այլ Ս. Հոգիով: Յաճախ հետաքրքրութիւնը

կը կեդրոնանայ ջուրով մկրտելու վրայ: Աւելի կարևոր էր մկրտուելէ առաջ պահանջուած սրտի վիճակը, և մեղքերը խոտորմանելու միտումը, զոր Յովհաննէսի քարոզութիւնը յառաջ կը բերէր: Իսկ է՛ն կարևորն էր խոտորման թաղանթի զիտը նաշովը: Եր Յիսուսի մէջ:

Գ) Յիսուս. Հոս դարձեալ նկարագրութիւնը շատ կարճ է: Յիսուս եկաւ և մկրտուեցաւ: Ասոր վրայ երկնային զարմանալի այցելում և հաստատում մը պատահեցաւ (Տէ. Թովհ. 1. 32-33, Սաղ. 2: 7 Եւ. 42: 1):

Մեծ առանձնութեան մէջ գերմարդկային ուժեր Իրեն համար սաստիկ փորձութեան պահ մը չինեցին: (Հոգիէն անապատ տարուած, սաստիկ փորձուած, հրեշտակները իրեն ծառայած) Յովհաննէսի ձերբակալումէն յետոյ Ինք Գալիլիա անցաւ աւետիսով նոր, ուրախառիթ և չլուծած պատգամ մը, թէ Աստուծոյ որդւոյ ժամանակը եկած էր, թէ Աստուծոյ խոտորման թաղանթութիւնը հոջակուելու վրայ էր:

Դասեր: 1) Հին Կառկարանի մէջ եղող Մեհարական համարները սերտէ. զանոնք Ս. Կըրքի մէջ նշանակէ: 2) Հիմա, մեղքերու խոտորման թեան համար ընդհանուր շարժում մը պէտք է: 3) Քրիստոնէութեան Աւետարանը Հին Կառկարանի խոտորման կամ Յովհաննէսի ապաշխարութեան հրաւերը չէ, այլ Յիսուսի թարմ և շնորհալի պատգամը՝ նոր ու օրհնակ կեանքի մը մասին: Այս վերջինը պէտք է իրաջանեք և քարոզենք: Այն պիտի հրապարակէ մարդիկը:

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՈՆԸ

ԿԱՓԱՌՆԱԹՈՒՄԻ ՄԷՋ Մարկ. 1.21-39:

Յունուար 15

1. Յասակագիծ. ա) Ժողովարանի մէջ Իր վարդապետութիւնը (21,22). չար ոգի ունեցող մարդուն բժշկումը (23-28): բ) Պետրոսի տան մէջ Պետրոսի զոքանչին բժշկումը (29-31). ամբոխը իրիկուան գէմ (32-34): գ) Յաջորդ օր առաւուն կանուխ առանձնանալու կ'երթայ (32). քարոզելու համար ուրիշ տեղ կ'երթայ (36-39):

2. Ուսումնասիրութիւն. Հոս Մարկոս մեղի կը պատկերացնէ յազմական Քրիստոսը: Ան կը յաղթէ մարմնական (30-34) և ոգեկան

(23-26,34) նեղութիւններուն, բայց իր յայտնի նպատակն է ուսուցանել (21) և քարոզել (38), մարդոց հոգեւոր ազատութիւն շնորհելու համար (Յովհ. 8.31,32):

Յիսուս իր պալիւսիկան պաշտօնէութեան միջոցին իր առեւը կախառնայում հաստատած էր և զայն իր զործին կեդրոնը ընտրած: Իր այդ տեղի դործունէութեան մասին նոյն ինքն Յիսուս երկիցս ակնարկած է իր քարոզութեան մէջ (Ղուկ. 4.23, Մատթ. 11.23,34):

Մարկոսի միջոցաւ Պետրոս մեղի կը պատմէ թէ Յիսուս ի՛նչ ըրաւ բուն իր քաղաքին, թաղին և տանը մէջ, նաեւ բուն իր զոքանչին, բաներ՝ որոնք Պետրոս չէր կրնար մտնալ:

Սյն հրաշքները որոնք Յիսուս կը կատարէր, չեղտուած են այս Աւետարանին մէջ: Անոնք Յիսուսի փառքը կը յայտնէին: (Տես Բ. Պետր. 1.16,17): Անոնք մեծ նշանակութիւն ունէին Պետրոսի համար: Յիսուս հիմայ փառաց թաղաւորն է (Ա. Պետր. 1. 21):

Պատմութեան մէջ կեդրոնական կէտը Յիսուսի հեղինակութիւնն է (22. 27): Ան Ս. Կիրքը կը մեկնէ, ոչ թէ զպիրներու պէտրազդատումով և հետեւութիւնով, այլ անոր պէտ՝ որ ուղղակի կը հասկնայ Աստուծոյ բռնիքը: Հնաշանդութիւնը՝ որ կը յաջորդէ Իր հրամանին՝ փաստ մըն է թէ ինք կ'իշխէ մարդերը կաշկանդող ուժերուն վրայ:

3. Դաս. Դասը Յիսուսի այս հեղինակութեան մասին է: ա) Ան կը հասկնար Հին Կառկարանի հոգեւոր նշանակութիւնը, և մարդոց հոգեւոր բնոյթն ու փորձառութիւնը: Ան կը խօսէր ինչ որ գիտէր (Յովհ. 3. 11): Իր վարդապետութիւնը, ուրիշ, մեղի համար զանձ մ'է հոյեւոր բաները հասկնալու, և մենք մասնաւոր ու շարքութիւն տալու ենք զայն ուսումնասիրելու և հոգեւոր կեանքի զազանքները սորվելու համար:

բ) Ան իր աշակերտներուն հեղինակութիւն տուաւ թշնամիին բոլոր ոյժին վրայ (Ղուկ. 10.19). սակայն նախ Ինքը ունէր այս հեղինակութիւնը և կրնար ընել ինչ որ իր աշակերտները կարող չէին (Մարկ. 9. 27.28): Մենք կարօտ ենք Յիսուսի ներկայ ոյժը հասկնալու: Կարգա՝ Մատթ. 28: 18, Բ Կորն. 12. 9, Յիլիփ. 3.21:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՀԱՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԻ ԳԻՐՔԵՆ 6

Թագաւոր մըն հմ, անունս եօթը գիրով
կը գրուի։

Որուն 4.5. կը գտնես կամ ձեռքիդ, կքմ

զլխուդ մէջ, կամ աղբիւրին մէջ։

» 5.7. Եկեղեցիին հիմին մէջ փնտուէ։

» 5.4.7. փնտուէ երկրագործին զոր-
ծիքներուն մէջ, քերականութեան
մէջ, կամ քու մէջդ։

» 5.2.3. Կերածդ, խմածդ, հաղածդ
ամենն ալ իր մէջ կան։

» 7.6. Ամիրներուն մէջ կայ։

» 2.3.4.5.6.7. Երեք բառերով կոչա-
կան բացաղանջութիւն մը։

Գտիր անունս։

Թիւ 5 հանելուկին պատասխանն է.

Իդիքուն

Շիտակ լուծողն է

Լուլու Կ. Յարութիւնեան

Հեղեղեմ Տարուած Երասխան

Տարի մը մեծ գետերէն մէկը յորդած էր,
ամբողջ հովիտը, պարտէզները և գիւղական
չէնքերը ջուրով ծածկուած էին։ Հեղեղը ա-
մէն ինչ քշած տարած էր։ Խուզարկուները
երբ նաւով կը շրջէին ջուրին վրայ, այդ լայ-
նատարած գետին ճիշդ մէջտեղը երախայի մը
ծփացող օրօրոցը գտան, որուն մէջ վերմակով
փաթթուած պզտիկ մը մէկի մէկ կը քնանար,
իբր թէ իր մօշը գիրկը եղած ըլլար։

Աստուած ամէն մէկ պզտիկն ալ այսպէս
կը հողայ, կատաղի ալիքներուն նման մեզի
սպառնացող բոլոր փորձանքներուն մէջ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱԿԱՐԱԿԱՆ

Եկեղեցական Ծախսերը Հոգալ. Ը. ՓԱՐԹՐԻՃ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Օրում Պատգամը.

ԱԶԱՏ

Հնախուզական Նորոքիւններ.

ԱԶԱՏ

Դասխարակութեան Դերը. Յ. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՍԹԲ

Կ. ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՄԱՆԿԱՆՑ ԷԶԸ

ԲՍՐԻ ՄԱՐԴԻԿ ԱՄԵՆԵՒԻՆ ՁԵՆ ՄԵՌՆԻՐ

Կան երկիրներ՝ ուր Յիսուսի անունն ան-
գամ լսուած չէ տակաւին։ Հնդկաստանի
կապալաւ քաղաքներէն մէկուն մէջ՝ ուր Մի-
սիսնարները նոր սկսած էին իրենց զորո-
նէութիւնը՝ օր մը փոքր աղջիկ մը ամէնալով
կը զարնէր միսիսնարին տան զուռը։ Դու-
ռը բացուեցաւ, և քիչ վերջը աղջիկը միսի-
սնարին զիմացը կը գտնուէր։ «Ուր է Պր.
Չարլըս» հարցուց Հնդիկ աղջիկը։

Միսիսնարը ուշադրութեամբ նորեկին
նայելով. «Աղջիկս, Պր. Չարլըս միտաւ» պա-
տասխանեց։

«Ինչ» ըսաւ աղջիկը. «միթէ կարելի՞ է
որ անիկայ մեռած ըլլայ, երկու շաբաթ ա-
ռաջ ինքը ինծի կ'ըսէր թէ բարի մարդիկ
ամենեւին չեն մեռնիր, իմ ճանչցած մարդոցս
մէջ ինքը ամէնէն բարի մարդն էր. հապա-
կոնչպէս կրնայ մեռած ըլլալ ինք՝ որ...» ու
աչքերը լիցուեցաւ, սիրտը փոփոկեցաւ, ու
չկրցաւ խօսքը լմնցնել։

Միսիսնարը աղչած, ինքը ևս ինչ ըսե-
լիքը չեր գիտեր. Հոգույ անմահութեան մա-
սին ի՞նչ կրնար հասկնալ Հնդիկ աղջնակ մը,
որ հագիւ թէ տառը տարեկան էր։

«Ո՛հ» ըսաւ աղջիկը, երբ կրցաւ խօսքը
շարունակել. «Այսուհետեւ զէթ իմ սրտիս
մէջ ան միշտ պիտի ապրի։»

Ստացանք մէկ Տօլար, բաժանորդագրին
Տիար Կ. Պ. Պահարեանէ։

Ո. օրօնէթրը, Մէս. Մ. Ն.

Ստացանք Վեր. Կ. Աղապարեանէ Է1-4-0,
վեց բաժանորդագրիներուն զուամարը։

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կրօնարարոյական, Դիտական, Կրթա-
կան երկշաբաթաթերթ։

Արտատուէր, Վեր. Կ. Յարութիւնեան

Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խըրլոբեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիս

Արտատուհման » » 1 Տօլար

Հասցէ—

NOR AVEDAPER

BQITE POSTALE 287

ALEP, SYRIE